ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐԺԵՔ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության և դրա հետ կապված հարակից հարցերի ուսումնասիրությունը կազմում է մեր ժողովրդի բազմադարյան պատմության ամենահիմնական պրոբլեմներից մեկը։ Եվ դա պատահական չէ, որովհետև հայ ժողովրդի քաղաքական պատմության բովանդակությունը դասակարգային պայքարին զուգահեռ նաև ազատագրական պայքարն է՝ դարեր տևած օտար տիրապետությունների կամ օտար քաղաքական ազդեցությունների դեմ, որոնք հաճախ սպառնացել են քաղաքական ինքնուրույնությունից զրկված, սոցիալական ու իրավական ծանր վիճակի մեջ գտնվող հայ ժողովրդի նույնիսկ ֆիզիկական գոյությանը։

Նախասովետական և հատկապես սովետահայ պատմագրության մեջ այդ հարցը միշտ էլ արծարծվել է և հրապարակ են եկել մեկ տասնյակից ավելի աշխատություններ։ Կարելի է համարձակ ասել, որ եղած աշխատությունները վերաբերում են արևելահայերի ազատագրական ձգտումներին, քաղաքական կողմնորոշումներին, ծրագրերին և վերջապես բուն շարժումներին, որոնք մի զգալի չափով ամփոփվեցին Աշոտ Հովհաննիսյանի երկհատորանոց ուսումնասիրության մեջ[1]։ Իսկ արևմտահայերի միջավայրում ազատագրական պայքարի մտորումներ, բանագնացություններ և ծրագրեր եղել են, թե ոչ, այդ մասին հայ պատմագրությանը ինչպես նախասովետական, այնպես էլ սովետական շրջանում՝ մինչև վերջերս շատ բան հայտնի չէր։ Եվ ահա, այդ խնդրի մանրազնին ուսումնասիրությանը ձեռնամուխ եղավ Հակոբ Անասյանը։ Տակավին չէր թուլացել նրա մի այլ՝ «Հայկական մատենագիտություն» հոյակապ գործի հիմնադիր հատորի ստեղծած տպավորությունը և ահա նա մեզ ուրախացրեց մի նոր անակնկալ ուսումնասիրությամբ[2]։

Այս ուսումնասիրությունը երկարատև որոնումների ու տքնաջան պրպտումների արդյունք է։ Արևմտահայերի ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությամբ Հակոբ Անասյանը զբաղվել է շուրջ երեսուն տարի, առաջին անգամ 1934 թ. «Երկունք» ամսագրում հրապարակելով այս թեմային վերաբերող փոքրիկ, բայց հիմնադիր հոդվածը՝ «Նպաստ մը հայոց ազատագրական պատմութեան. Մահտեսի Շահմուրատ և Յովհաննէս Թիւթիւնջի» խորագրով[3]։ Հոդվածում ցույց էր տրված, որ Մահտեսի Շահմուրատը և «հայ ազնվական» Մուրատը միևնույն անձնավորությունն են, իսկ վերջինիս և Հովհաննես Թութունջու 1683 թ. Վերսալում գտնվելը, հեղինակի կողմից դիտվել է որպես արևմտահայերի ազատագրական մտորումների և ձգտումների հետ կապված մի առաքելություն։ Իհարկե, հեղինակի այս բավական հետո, ուրիշ ուսումնասիրողներ ևս եկան նույնանման հետևությունների[4], սակայն, Հ. Անասյանը շարունակեց հետևողական որոնումներ կատարել, որոնք նոր փաստեր մատակարարեցին հեղինակին իր նախնական թեզերը հաստատելու և զարգացնելու համար, որի արդյունքը եղավ ներկա ուսումնասիրությունը։ Վերջինս գրվել է հայկական և օտար, հաճախ շատերի համար անմատչելի, սկզբնաղբյուրների հիման վրա, որոնք իրենց բնույթով տարբեր աղբյուրներ են՝ ճանապարհորդական նոթեր, նամակներ, դիվանագիտական զեկուցագրեր, կենսագրություններ և այլն, և այլն, և որոնց մի մասը հնատիպ և հազվագյուտ օրինակներ են։ Այս աշխատությունը տակավին 194։ թվականին ավարտված էր[5] և մասնակի լրացումներից ու ճշտումներ կատարելուց հետո հրա-

---

1 Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, հ. 2, Երևան, 1960։

2 Հ. Ս. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում. պատմական հետազոտություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1961։

3 «Երկունք», Փարիզ, 1934, № 6—7։

4 Ա. Ալպոյաճյան, Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը, Կահիրե, 1946։

5 1947 թ. հանձնվել էր ՀՍՍՌ ԳԱ-ի Պատմության ինստիտուտի արխիվին, տե՛ս թղթապանակ № 180։

պարակվեց միայն վերջերս, թեև այս ուսումնասիրության նյութերից որոշ մաս հրատարակվել էր գիտական մամուլում 1951 և 1954 թվականներին6։

Հ. Անասյանի այս ուսումնասիրության շնորհիվ ի հայտ եկան հայ պատմագրությանը ցարդ անծանոթ մնացած արևմտահայ ազատագրական շարժման նոր էջեր։ Այս շարժումը ծառացած էր Օսմանյան Թուրքիայի անլուր դաժանությամբ հայտնի տիրապետության դեմ և ընդգրկում էր շուրջ կեսդարյա մի ժամանակաշրջան։ Եթե հետևելու լինենք դեպքերի զարգացման ընթացքին, ազատագրական այս շարժումը կարող ենք բաժանել երեք շրջանների. ա) Ազատագրական շարժման սաղմնավորման շրջան՝ 17-րդ դարի 30-ական թվականներից մինչև 1666 թ.։ Այս շրջանին են վերաբերում ուսումնասիրության Ներածությունը և Ա—Գ գլուխները։ բ) Ազատագրական շարժման առաջին շրջան՝ կապված Կանդիայի պատերազմի վերջին շրջանի հետ՝ 1666—1669 թթ.։ Այս շրջանին են վերաբերում ուսումնասիրության Դ—Է գլուխները։ գ) Ազատագրական շարժման երկրորդ շրջան՝ կապված Ֆրանսիայի հետ, 1669 թվականից հետո մինչև 1683 թ.։ Այս շրջանին են վերաբերում ուսումնասիրության Ը—ԺԱ գլուխները։ Ուսումնասիրության վերջին երկու գլուխները վերաբերում են արևմտահայ ազատագրական շարժման և Եղիազար Այնթապցու գործունեության գնահատման հարցերին։

Առաջաբանում կարճառոտ խոսվում է ներկա ուսումնասիրության համար հիմք դարձած՝ 17-րդ դարի արևմտահայ ազատագրական շարժման ուղիների մասին, որ այդ շարժումը իր հույսը սխալ կերպով կապում էր արևմտա-եվրոպական կողմնորոշման հետ, իսկ ռուսական կողմնորոշման համար լոկ հող էր նախապատրաստվում։ Հայ իրականության մեջ, ինչպես նշում է Անասյանը, ազատագրական շարժման երկու հատվածներն էլ՝ և՛ արևմտահայերի, և՛ արևելահայերի, գնում էին միևնույն ուղղությամբ՝ դեպի Արևմուտք, սակայն իրարից անկախ և տարբեր ճանապարհներով, և, նույնիսկ, բացակայել է դրանց միջև օրդանական կապը։ Ինչո՞ւ, որովհետև, ինչպես նշում է հեղինակը, պայքարը գնում էր երկու տարբեր պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի դեմ, որոնք միմյանց թշնամի էին, մյուս կողմից՝ այդ միասնությանը արգելք էր այն թշնամանքը, որը գոյություն ուներ Բուրբոնների (Ֆրանսիա) և Հաբսբուրգների (Գերմանիա) միջև, որոնք իրենց նպատակների համար օգտագործում էին հայ ազատագրական շարժումները։ Այստեղ անհրաժեշտ է ավելացնել, որ այդ երևույթը պետք է դիտել որպես հայերի միասնական պետականության և ժողովրդի ամբողջականության բացակայության արդյունք, որը տևական մի երևույթ էր հայերի համար, իսկ հայությունն այդ պայմաններում գտնվում էր օտար, տնտեսապես և քաղաքականապես հետամնաց երկու պետությունների գերիշխանության տակ, զուրկ լինելով տնտեսական ու քաղաքական միասնությունից։

Ներածության մեջ հեղինակը համառոտակի խոսում է Թուրքերի կողմից Հայաստանի արևմտյան նահանգների նվաճման մասին և ապա տալիս Արևմտյան Հայաստանի վարչական պատկերը 17-րդ դարի երկրորդ կեսում՝ ըստ Օսմանյան վարչական բաժանման։ Հեղինակն այս պատկերը տվել է հետևելով ժամանակակից Ռայկոտի տվյալներին, որոնք, ի դեպ, լայնամասնասիրության մեջ չեն ուսումնասիրված, թեև անցողակի օգտագործվել են Լեոյի կողմից։, առանց քննության։ Ռայկոտի մոտ անունները շափազանց աղավաղված լինելով Անասյանը, ուրիշ աղբյուրների օգնությամբ, դրանք մեծ հմտությամբ ուսումնասիրել է և տվել ըստ ամենայնի գիտական ցուցակ8։ Ճշտելով այս անունները, Անասյանը, դյուրըմբռնելի դարձնելու համար, նրանց կողքին, փակագծերի մեջ, նշել է վերջիններիս հայկական հին անունները։ Այստեղ կան հեղինակի բազմաթիվ և սրամիտ ճշտումները, օրինակ, ուսումնասիրողներից ոչ ոք դեռ չի ասել, թե Վանի կուսակալության մեջ հիշատակվող Աղաքիսի սանջակը հայկական ի՞նչ անուն ուներ և ո՞ր շրջանին է համապատասխանում, մինչդեռ Անասյանը ասում է, որ դա Նղեգիսի շրջանն է կամ պատմական Կարճկանը։ Էրզրումի կուսակալության մեջ հիշատակվող երկու Փասին-ներից (Վերին և Ստորին Բասեն) բացի, Ռայկոտի մոտ նշվում է մի երրորդ Փասին ևս. Անասյանը ցույց է տալիս, որ դա հայկական աղբյուրներում հիշատակվող Անփայտ Բասենն է կամ Կարմիր

---

6 Հ. Ա ն ա ս յ ա ն, Թուրքական տիրապետությունը Հայաստանում 17-րդ դարում («Տեղեկագիր», հաս. գիտ., 1951, № 5, էջ 51—70. և նույնի «Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (17-րդ դար)», («Տեղեկագիր», հաս. գիտ., 1954, № 3, էջ 85—99)։

7 Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1948, էջ 53։

8 Այս ցուցակն առաջին անգամ հրապարակվեց 1951 թվին (տես «Տեղեկագիր», հաս. գիտ., 1951, № 5, էջ 54—56)։

Փորակը։ Հմմտ. նաև Ռայկոտի Քեյֆի կամ Քիֆի (كيفي) անունը, որ Անասյանը վերականգնել է որպես Քեյդի(كيدي)՝ համապատասխան Կեղի անվան հետ և այլն։ Միայն ցավել կարելի է, որ այդ ճշտումների հիման վրա կազմված մի քարտեզ չի կցվել այս ուսումնասիրությանը։

Այնուհետև հեղինակն, ըստ ժամանակակից Ֆերուրի, տալիս է ցուցակը այն հարկերի, որ ոչ-մահմեդականները վճարում էին սուլթանին ու կուսակալ փաշաներին։ Բնութագրելով Օսմանյան Թուրքիայի ռազմա-ֆեոդալական կարգերը՝ հեղինակն անցնում է քրիստոնյա ժողովուրդների սոցիալական և իրավական ծանր զոյավիճակի բնութագրմանը, աչքաթող չանելով նաև անգլիական, ֆրանսիական և հոլանդական կապիտալի թուրքական շուկա ներթափանցելու մրցության հարցը։ Նկարագրելով Թուրքիայի գերիշխանության տակ հեծող ժողովուրդների ծանր վիճակը, Անասյանն այն հանգեցնում է քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարին։ Սակայն, այս հարցը, ի պատիվ հեղինակի, պետք է նշել, որ նա չի քննում լոկ ներհայկական ինքնամփոփ ջրջանակների մեջ, այլ ցույց է տալիս, որ ազատագրական ձգտումներով համակված էին նաև հույները, բուլղարները, ալբանները և այլն։ Նշված ժողովուրդների ծանր զոյավիճակի ցուցադրումը և դրա հիման վրա առաջ եկած ազատագրական շարժումները մի անառարկելի պատասխան են ժամանակակից Թուրքիայի պատմագրության մեջ իշխող այն կեղծ տեսակետին, թե Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ ապրող փոքր ժողովուրդները իրենց միշտ էլ լավ են զգացել։

Թե ինչո՞ւ 17-րդ դարի ազատագրական շարժումները արևմտյան հայերի մոտ գնացին Արևմտյան Եվրոպայի կողմնորոշման ուղիներով, հեղինակը բացատրում է ժամանակի հանգամանքների անհրաժեշտության բերումով և դարերի ընթացքում հայ ազատագրական ձգտումները փայփայող «Դաշանց թղթի», Ներսես Պարթևի և Ազարոնի տեսիլների տրամադրություններով. «Քաղաքական այն կողմնորոշումը, որն ընդգրկված էր այս շրջանում, ոչ թե ժամանակի հանգամանքների բերած անհրաժեշտությունն էր լոկ, այլև, միաժամանակ, արտահայտությունը հայերի մեջ դարերի ընթացքում կազմված գաղափարական մի ձևավորման, որը տիրող էր 17-րդ դարում» (էջ 56)։

Ճիշտ է հեղինակի այն միտքը, որ «ազատագրական ծրագիրը հիմնված է լոկ ժողովրդական ապստամբության գաղափարի վրա» (էջ 56—57)։ Հեղինակի այս միտքը, դժբախտաբար, չի հագեցված փաստական նյութի անհրաժեշտ մանրամասնություններով։

Ուսումնասիրության Ա և Բ գլուխները նվիրված են 17-րդ դարի արևմտահայ հասարակական հոսանքների ուսումնասիրությանը և նրանց միջև գոյություն ունեցող պայքարին։ Հեղինակն առաջ քաշելով և հանգամանորեն ուսումնասիրելով այս հարցը, ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում արևմտահայ բուրժուազիան որոշակիորեն բաժանված էր երկու թևերի՝ չելեբիական կամ վաշխառուական, որի «գործունեության գլխավոր ասպարեզը փաշայական ու արքունի միջավայրն էր և, հետևաբար, չելեբիների շահերը սերտորեն կապված էին թուրք բյուրոկրատիայի հետ» (էջ 66), և խոջայական կամ առևտրական, որի գործունեությունն ընդգրկված էր միջազգային խոշոր առևտրի ոլորտներում։ Այս երկու թևերը կատաղի պայքար էին մղում ազգային հասարակական գործունեության ասպարեզում իշխող ու ղեկավարող դիրքեր գրավելու համար։ Այստեղից էլ առաջանում է խոջայության կողմից սեփական երկիր՝ հայկական անկախ պետականություն ունենալու խնդիրը և ծագում է արևմտահայ ազատագրական շարժումը։ Անհրաժեշտ է նաև նշել, որ Դավրիժեցու մոտ եղած այն տվյալները, որոնք արտահայտում են արևմտահայ հոսանքների պայքարը, իբրև այդպիսին չեն ընկալվել և մեկնաբանվել Լեոյի կողմից։ Դավրիժեցու նկարագրած այս անցքերի մեջ Լեոն աշխատել է տեսնել դասակարգային պայքարի սաղմեր՝ պոլսահայ բնիկ ունևորության և գավառական պանդուխտ պրոլետարիատի միջև[9]։ Մինչդեռ Անասյանը, քաջ ծանոթ լինելով իր առջև դրված նյութերին և ճիշտ պատկերացնելով դեպքերի ընթացքը, համոզեցուցիչ փաստերով ցույց է տալիս, որ դա ներդասակարգային պայքար էր բուրժուազիայի երկու հատվածների միջև։

Հայ պատմագրության համար, անշուշտ, հետաքրքրական հարց է պոլսահայ, այսպես կոչված, «պատրիարքական կոիվների» էության լուսաբանումը՝ այդ կապելով արևմտահայ հոգևորականության ներքին պառակտման և նրա ներսում գոյություն ունեցող, հեղինակի կողմից այսպես անվանված, սսական և էջմիածնական թևերի պայքարի հետ։ Հեղինակը, ճիշտ կերպով, այդ պայքարը չի դիտում լոկ դավանաբանական առումով, ընդհակառակը, նա այդ պայքարում տեսնում է «արևմտահայ բուրժուազիայի ներքին ալեկոծությունների» դրսևորումը (էջ 74), որը

---

9 Լեո, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մասն Ա։ Երևան, 1926, էջ 58։

այս շրջանում հանդիսանում է մղիչ ուժ արևմտահայ հասարակական կյանքի։ Բնութագրելով սսականների և էջմիածնականների ձգտումը այդ պայքարում, հեղինակն այնուհետև նշում է, որ արևմտահայ բուրժուազիայի խոշոյական թևն իրեն զինակից դարձնում է սսականներին, իսկ չելեբիականը՝ էջմիածնականներին (էջ 75)։ Հեղինակը, դժբախտաբար, չի քննում, թե ինչու այդ պայքարում խոշոյական թևը հարեց սսականությանը, իսկ չելեբիականը՝ էջմիածնականությանը։ Սա շատ կարևոր և հետաքրքիր հարց է։ Մյուս կողմից, 17-րդ դարում տեղի ունեցած արևմտահայերի ազատագրական ձգտումներին և սրանց միջոցառումներին, էջմիածինը հազիվ թե որևէ տեղեկություն չունենար. ապա արդարացի հարց է ծագում, ինչպե՞ս է, որ 17-րդ դարի 70-ական թվականներից հետո, երբ արևմտահայ ազատագրական պայքարն իր երկրորդ շրջանն էր ապրում, արևելահայերի մոտ առաջ եկած ազատագրական մտորումներն ու բանագնացությունները անտեսում են արևմտահայերի նույնանման միջոցառումները և իբր թե ոչ մի օրգանական կապ չենք տեսնում այս երկուսի միջև։ Ճիշտ է, այս մասին ակնարկ կա Առաջաբանում, բայց այն լրիվ բացատրված չէ։

Գ և Դ գլուխներում քննվում է քաղաքական իրադրությունը Եվրոպայում և խաչակրաց արշավանքի հարցը։ Քաղաքական ամենակարևոր հարցն այս ժամանակ Կանդիայի պատերազմն (1645—1669 թթ.) էր, որը մղվում էր Թուրքիայի և Վենետիկի հանրապետության միջև։ Այս պատերազմը շոշափեց եվրոպական գրեթե բոլոր պետությունների շահերը, և բոլորի համար էլ հավասարաչափ անհրաժեշտ էր թուլացնել ուժեղացող Թուրքիան և Միջերկրականը փակել վերջինիս առաջ։ Հենց այս պատճառով էլ Եվրոպայում սկսեց շրջել խաչակրաց նոր արշավանքի ուրվականը։ Այս կապակցությամբ Օսմանյան կայսրության մեջ մտնող քրիստոնյա ժողովուրդների մեջ աշխուժանում է կաթոլիկ միսիոներների գործունեությունը։ Վերջիններս սրանց ներշնչում էին շուտափույթ ազատագրման գաղափարը։ Եվ այս հողի վրա, Կանդիայի պատերազմի պայմաններում, առաջ են գալիս Թուրքիայի տիրապետության տակ հեծող քրիստոնյա ժողովուրդների ազատագրական ծրագրեր։ Հեղինակն օգտագործելով իտալացի պատմագիր Բուլգարինիի հաղորդածը մի հայ ազնվականի մասին, որը 1666 թ. Փարիզ էր եկել հայ-հունական միացյալ ապստամբության ծրագրով, քննում է այս ծրագիրը և Ե գլխում խոսում այդ պատվիրակի ինքնության մասին։ Մանրազնին քննությունից հետո Անասյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Բուլգարինիի մոտ հիշված «հայ ազնվականը» Կողմա Պալեոլոգի հետ Փարիզ ժամանած Հաջի Մուրատն է, նույնինքն Մահտեսի Մուրատը (1672 թ. հիշվում է Խոջա Մուրատ, իսկ 1683 թ.՝ Բաղիշեցի Մահտեսի Մուրատ կամ Մահտեսի Շահմուրատ)։ Քննելով այս անձնավորության սոցիալական վիճակը, Անասյանը ճիշտ կերպով ցույց է տալիս, որ Հաջի Մուրատը (նույնինքն Մահտեսի Շահմուրատը) արևմտահայ բուրժուազիայի խոշոյական թևի ներկայացուցիչն էր։ Այնուհետև Անասյանն անցնում է Մահտեսի Շահմուրատի ազատագրական պայքարի ծրագրի քննությունը, որի էությունն այն էր, որպեսզի կազմակերպվեր հայ-հունական միացյալ ապստամբություն Հայր Օտտոմանի գլխավորությամբ։ Թե ո՞վ էր Հայր Օտտոմանը, շատ մանրամասն քննված է Զ գլխում։ Եվրոպայում սրան համարել են սուլթանազուն՝ սուլթան Իբրահիմի որդին։ Կանդիայի պատերազմի տարիներին եվրոպական դիվանագիտությունը, ինչպես ցույց է տալիս Անասյանը՝ քաղաքական ճիշտ մոտեցումով, Հայր Օտտոմանին մեջտեղ է քաշում իր քաղաքական հաշիվների համար։ Փարիզում, ինչպես վկայում է Բուլգարինին, սրան դիմում է Մահտեսի Շահմուրատը և առաջարկում ղեկավարել հայ-հունական միացյալ ապստամբությունը և դրավել բյուգանդական գահը։

Հաջորդ՝ է գլխում հեղինակը մանրամասն քննության է ենթարկում «Արևելյան կայսրությունը վերականգնելու» հայ-հունական ծրագիրը, ուր նշված են այդ ծրագրի իրականացման երկու ուժերը՝ հայ-հունական միացյալ ապստամբությունը և դրսից եկած զինված օգնությունը՝ խաչակրությունը։ Այս կապակցությամբ քննված է նաև Ռուսաստանի և Վրաստանի մասնակցության հարցը, թեև այդ մասնակցությունը գործնականորեն հանդես չի եկել։

Ը և Թ գլուխներում հեղինակը ցույց է տալիս Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կանդիայի պատերազմի ժամանակ և պատերազմի ավարտից հետո։ Կանդիայի պատերազմից հետո Ֆրանսիան Թուրքիայի նկատմամբ վարում է հարձակողական քաղաքականություն։ Ելնելով այս բանից, արևմտահայ ազատագրական հարցը Մահտեսի Շահմուրատը կամ նրա ներկայացրած քաղաքական հոսանքը կապում է ուղղակի Ֆրանսիայի հետ։ Եթե առանձնացնենք վերջին այս մոմենտը, ապա ազատագրական շարժման ծրագիրը նույնն է, ինչ 1666 թ. ծրագիրը։ Սակայն այս ծրագիրը ևս ի դերև ելավ միջազգային հարաբերությունների լարվածության և հատկապես 1672 թ. Ֆրանսիայի և Հոլանդիայի միջև սկսված պատերազմի հետևանքով։

Ժ և ԺԱ գլուխները նվիրված են արևմտահայ ազատագրական շարժման նոր փուլում Մահտեսի Շահմուրատի և Հովհաննես Թութունջու գործունեության քննությանը։ Քննված է 1683 թ. գրված՝ Մահտեսի Շահմուրատի «Պատմութիւն Վէրսալիայ քաղաքին Ֆրանկաց» հիշատակարանը և ցույց է տրված Վերսալում հավաքված մի քանի հայերի առաքելության նպատակը՝ նորից բարձրացնել արևմտահայերի ազատագրման հարցը, թուրքերի կողմից Վիեննայի պաշարման շրջանում։ Մի քանի էջերում մեծ համոզիչությամբ է բացատրված Մարսելի հակահայկական և Փարիզի հայասիրական քաղաքականությունը, և պարզաբանված է Վերսալում գտնված հայ մի քանի գործիչների՝ Զաքարիա Սիսիանցու, Ջուզեպ Հալապցու և այլոց ինքնությունը։

Զեռնհաս պատմարանի հմտությամբ Անասյանը քննում է Հովհաննես Թութունջու Հարեշտան մեկնելու և վերադառնալու ճանապարհորդական նոթերը՝ վեր հանելով նրա առաքելության նպատակները։ Քննության ընթացքում պարզվում է, որ Հովհաննես Թութունջու առաքելությունն ունեցել է քաղաքական բնույթ՝ կապված ազատագրական շարժման խնդիրների հետ։ Ինչպես Անասյանն է ցույց տալիս՝ Հովհաննես Թութունջին փաստորեն հանդիսացել է Արևելքում Ֆրանսիայի ներթափանցման քաղաքականության ջատագով Երուսաղեմի արևմտահայ կաթողիկոսության ներկայացուցիչը, որին Լյուդովիկոս 14-րդը օգտագործելով ուզում էր «կաթոլիկության և ֆրանսիական կապիտալի մուտքն ապահովել այնտեղ (Հարեշտանում—Վ. Հ.) Հովհաննես կայսրի հետ բանակցելով, որպեսզի Եթովպիայի պատրիարքները հայերից բերվեն» (էջ 207)։ Այսպիսով, կրոնական քողի տակ և հայերի միջոցով Լյուդովիկոս 14-րդը փորձում էր Եթովպիայում իրագործել տնտեսական և քաղաքական հատուկ նպատակներ։

Հովհաննես Թութունջու գործունեության վախճանը, որը հեղինակն անվանում է առեղծված, հնարավոր չէ պարզել կոնկրետ փաստեր չլինելու պատճառով։ Եվ թվում է մեզ, Անանուն մի ժամանակագրության հեղինակի՝ Հովհաննես Թութունջու մասին գրած «Եղև գյուխ ազգին Ֆռանկաց և եկն ի վերայ Թուրքին» վկայության վերաբերող Անասյանի ենթադրյալ բացատրությունը (էջ 214—215) հավանական է։

ԺԲ գլխում հեղինակը համառոտակի նշում է արևմտահայ ազատագրական շարժման վախճանը և ապա գնահատման ենթարկում այդ շարժման երկու շրջանները։ Ճիշտ բնութագրելով այս կամ այն քաղաքական հոսանքների և գործիչների գործունեությունը, եղելությունների և ծրագրերի էությունը, առանձին դեպքերում միայն կարող են վիճելի և կամ սրբագրության կարոտ համարվել այդ գնահատականները։ Ուսումնասիրության 220-րդ էջում խոսելով Հովհաննես Թութունջու մահվան մասին, հեղինակը գրում է. «Կարելի է ասել, որ արևմտահայ ազատագրական շարժման դերակատարներից Հովհաննես Թութունջիի մահով նշվում է նաև 17-րդ դարի շարժումների դադարումը»։ Նախ, իրականում, 1683 թվականից հետո մինչև Հովհաննես Թութունջու մահը արևմտահայ ազատագրական շարժումն արդեն թուլացում էր ապրում, այդ բանն այնքան ուժեղ էր, որ փաստական ոչ մի հետք չի մնացել։ Իհարկե, մենք հեռու ենք այն մտքից, որ դրախոսվող աշխատության բանիմաց հեղինակը այն կարծիքին է, թե Հովհաննես Թութունջու մահով է դադարել արևմտահայ ազատագրական շարժումը։ Այստեղ մի փոքր անհաջող է ձևակերպումը։ Մինչդեռ արևմտահայ ազատագրական պայքարի դադարը կապված էր քաղաքական ավելի խոր պատճառների հետ։ Բանն այն է, որ և՛ արևմտահայերի, և՛ արևելահայերի ազատագրման գործում օբյեկտիվորեն մեծ տեղ էր տրվում ինչպես դրսից եկած օգնությանը, այնպես էլ Թուրքիայի կամ Պարսկաստանի լծի տակ հեծող ժողովուրդների ազատագրական պայքարի միասնությանը։ Դժբախտաբար, դեպքերի բերումով 1683 թ., երբ Թուրքիային հետ շպրտեցին Վիեննայի պատերի տակից և այնուհետև նա շարունակեց թավալգոր ապրել իր թուլացումը, եվրոպական պետությունները փոխանակ օգտագործելու այդ մոմենտը, զբաղվեցին իսպանական ժառանգության համար մղվող պատերազմով, իսկ Ռուսաստանը՝ Հյուսիսային մեծ պատերազմով։ Այդ պայմաններում արևմտահայ և արևելահայ ազատագրական շարժումներին եվրոպացիները պետք չունեին՝ թուրքերի դեմ օգտագործելու համար։ Մյուս կողմից՝ ինչ-ինչ պատճառներով գլուխ չէր գալիս թուրքերի լծի տակ հեծող փոքր ժողովուրդների ազատագրական միասնական պայքարի կազմակերպումը։ Ըստ էության սրանք (և ոչ միայն սրանք) են արևմտահայ ազատագրական շարժման դադարի պատճառները։

Հեղինակը բերելով մի շարք տվյալներ, թե արևմտահայ գործիչները ազատագրված Հայաստանը քաղաքական ինչպիսի կառուցվածքով էին պատկերացնում (էջ 220—223), ուշադրություն չի դարձրել խոջայական միջավայրում մեծացած և սրանց քաղաքական տրամադրություններն արտահայտող Հակոբ Կարնեցու քաղաքական հայացքների վրա՝ կապված Հայաստանի

պետական կառուցվածքի հետ։ Վերջինս ուզում էր Հայաստանը տեսնել ֆեոդալական կենտրոնաձիգ միասնական միապետության շրջանակներում[10]։

Անասյանը խոսելով Հայր Օտտոմանի ծրագրի գնահատման մասին, գրում է, թե այդ ծրագիրը, եթե իրականացվեր, «իրականության մեջ որևէ փոփոխություն չէր բերի Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին, ոչ ըստ ձևի, ոչ էլ ըստ բովանդակության» (էջ 224)։ Այստեղ հեղինակն իրավացի է այն առումով, որ, եթե իրականացվեր այդ ծրագիրը՝ Հայաստանը դարձյալ կրնկներ օտար տիրապետության տակ, սակայն, ֆրանսիական, անգլիական և եվրոպական որևէ պետության տիրապետությունը չէր կարելի համեմատել թուրքական տիրապետության հետ։ Այստեղ խոսքը համեմատական չափով ազատ վիճակի մասին է։

Ուսումնասիրության վերջին գլուխը՝ Եղիազար Այնթապցու և Եղիազարյան շարժումը՝ արտաքին հայացքից թվում է թե կապ չունի ներկա ուսումնասիրության մեջ արծարծված հարցերի հետ, սակայն, դա միայն առերևույթ է։ Քննության ենթակա հարցերի կապակցությամբ այս գլխում Եղիազար Այնթապցու գործունեության՝ հեղինակի քննությունը և գնահատականը վերին աստիճանի ինքնատիպ է։ Հայ պատմագրության համար նորություն է այն լուսաբանությունը, որ տրվում է այստեղ Եղիազարյան շարժմանը։ Սկսած Մ. Չամչյանից մինչև մեր օրերը Եղիազար Այնթապցու գործունեության մղիչ ուժը համարվել է նրա անձնական փառամոլությունը։ Փորձ չի արվել Եղիազարյան շարժմանը մոտենալ ոչ թե անհատական մի ձեռնարկման, այլ որպես պատմա-հասարակական երևույթի։ Ահա այդ փորձն է արված Անասյանի կողմից, որը այն լծակցել է արևմտահայերի ազատագրական խնդիրների հետ։ Դրանով իսկ հեղինակը նոր բացատրություններ է տվել այս հարցին։ 16—17-րդ դարերում հայ բարձր հոգևորականությունը բավական հաճախակիորեն հարաբերության մեջ է եղել Հռոմի հետ և այս միշտ էլ համարվել է կաթոլիկացում. Անասյանի կարծիքով այսպես կոչված կաթոլիկացումը ոչ միայն կեղծ էր, այլև այդ երևույթը կաթոլիկություն չէր, որովհետև հայ կաթոլիկությունը ուղղակի անջատողական ձգտումներ ուներ, օրինակ, Հովհաննես Քոնեցու՝ Նախիջևանում հիմնադրած ունիթորական շարժումը և այլն, մինչդեռ սրան հակառակ մյուսը «ձգտում էր բարենորոգում և հեղաշրջում մտցնել Հայկական եկեղեցու դավանական հասկացողությունների մեջ՝ Հռոմեական եկեղեցու հետ մերձեցման սկզբունքի հիման վրա, առանց, սակայն, խախտելու Հայկական եկեղեցու օրգանական միասնությունը և նվիրապետական անկախությունը» (էջ 75—76)։ Եվ այս երևույթը Անասյանը տիպական ձևով կոչել է սոսկանություն։ Սրանք հարցեր են, որոնք մեկանգամից դրվելով ուսումնասիրողների առաջ լուրջ խորհրդածությունների առիթ կարող են տալ։

Համառոտակի այս է ներկա ուսումնասիրության բովանդակությունը։ Պետք է ավելացնել նաև այն, որ ուսումնասիրությանը կցված են՝ եզրակացություններ (էջ 273—276), թվով 12 վավերագրեր (էջ 279—319)։ Այնուհետև ռուսերեն տրված է ամփոփում (էջ 323—348)։ Խնամքով է կազմված ուսումնասիրության գիտատեխնիկական ապարատը՝ օգտագործված աղբյուրների և գրականության մատենագիտություն (էջ 351—374), օտար և հայերեն պատմական, վարչական, հարկային և այլ տերմինների ու բառերի բառարան (էջ 375—390), հատուկ անունների և կարևոր առարկաների ցանկ (էջ 391—438)։

Ուսումնասիրության մեջ կան մանր-մունր որոշ վրիպումներ։ Աշխատությունը գրված է լեզվական բարձր մշակությամբ, սակայն, մի երկու տեղ կան անհարթություններ։

Հեղինակի տված առանձին բացատրություններ կարող են վիճարկելի լինել, սակայն, մի բան պարզ է, որ այս ուսումնասիրությունը չափազանց հետաքրքիր և նոր խոսք պարունակող աշխատություն է։ Հեղինակը, որն իր մենագրությունն սկսել է օտար և հայ սկզբնաղբյուրների, մանավանդ բեկորային հսկայական նյութի օգտագործմամբ և շատ քիչ է օգտագործել ուսումնասիրություններ, մեզ տալիս է ոչ միայն դեպքերի նոր և ինքնատիպ բացատրություններ, այլև պատմագրությանը առաջադրում է հարցեր, որոնք պետք է արժանանան մեր մասնագետների հատուկ ուշադրությանը։ Այդպիսի հարցերից են, օրինակ, արևմտահայ և արևելահայ շարժումների միջև եղած կապերի բացահայտման և լուսաբանման հարցը, ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ ազատագրական շարժումների՝ շրջապատի կամ հարևան ժողովուրդների հետ ունեցած կապերի հարցը և այլն։

Ուշադիր կարդալով հեղինակի այս գործը, որը մի նոր երևույթ է սովետահայ պատմագրության մեջ, մտաբերում ենք բաղմախորհուրդ այն ասացվածքը, թե նա գիտությունը սիրում է իր մեջ և ոչ թե գիտության մեջ՝ իրեն։

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

---

10 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 2, Երևան, 1956, էջ 562—563։